ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 95 (16183) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵՑ ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Նոյեմբերի 25-ին պետական գրասենյակում անցկացվեց նոր կառավարության անդրանիկ նիստը: Նիստում նախագահում էր Վրաստանի նորընտիր վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Նա նախարարներին շնորհավորեց պաշտոններում հաստատման եւ կառավարության անդրանիկ նիստի անցկացման կապակցությամբ: Կառավարության նիստի օրակարգում ընդգրկված էր 32 հարց, որից 3-ը գաղտնի հարցեր էին:

Կառավարության նիստում քննարկվեցին 2014 թվականի պետական բյուջեի նախագծում կատարվելիք փոփոխությունների, 2013 թվականի պետբյուջեի հստակումների, կրոնական միավորումների հարցով միջգերատեսչական հանձնաժողովի հիմնման եւ այլ հարցեր:

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանը նոյեմբերի 20-ին՝ 93 կողմ եւ 19 դեմ ձայներով, վստահության քվե հանձնեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած կառավարությանը: 2012 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո կազմավորված կառավարության կազմում, ներկայիս նախագահական ընտրություններից հետո, գրեթե փոփոխություններ չեն եղել, եւ այն ժամանակ մենք ընթերցողներին ներկայացրեցինք ինչպես կառավարության կազմը, այնպես էլ՝ դրա անդամների հակիրճ կենսագրությունը («Վրաստան», 3 նոյեմբերի, 2012 թ. № 87-88):

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՆՈՐԱՑՐԵՑ ՆԵՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նոյեմբերի 26-ին ներկայացրեց ներման հանձնաժողովի նոր կազմը: Հանձնաժողովի կազմում է նաեւ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը:

Ներման հանձնաժողովի նոր նախագահ է դարձել քաղաքացիական հատվածի ներկայացուցիչ, լրագրող Ալեքսանդր Էլիսաշվիլին: Նա այդ պաշտոնում փոխարինեց Էլենե Թեւդորաձեին: Հանձնաժողովում մնացել են նաեւ այն անդամներից մի քանիսը, ովքեր դրա գործունեությունում ներգրավվել էին նախկին նախագահի կողմից, այդ թվում՝ Ուչա Նանուաշվիլին, Թեոդորե Ճուլաձեն եւ Գիվի Շահնազարը: «Հանձնաժողովում ներկայացված են քաղաքացիական հատվածի, խորհրդարանի, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր անմիջական կապ կունենան բանտարկյալների հետ եւ կընդունեն իրատեսական որոշում»,- վստահեցրեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿՀԱՂԹԱՀԱՐԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂՈՒ ԲՈԼՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, մեկնաբանելով Ուկրաինայում տեղ գտած իրադարձությունները, հայտարարեց, որ եվրաինտեգրման ճանապարհին Վրաստանի առջեւ հնարավոր բարդությունները կհաղթահարվեն երկրի քաղաքական սպեկտրի միասնությամբ:

«Մեզ մոտ քաղաքական սպեկտրը բացարձակապես միանշանակ է եվրոպային ինտեգրման հարցում: Դա մեր քաղաքական, տնտեսական եւ մշակութային ընտրությունն է: Հետեւաբար, այն բարդությունները, որոնք հնարավոր է ծագեն մեր առջեւ, մի կողմից կհաղթահարվեն մեր քաղաքական սպեկտրի միասնությամբ, մյուս կողմից այն սերտ համագործակցությամբ, որը մեզ մոտ ձեւակերպվում է եվրոպական երկրների հետ»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նշենք, որ այսօր Վրաստանի կառավարական պատվիրակությունը՝ նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու ղեկավարությամբ, արեւելյան գործընկերության գագաթաժողովին մասնակցելու համար մեկնեց Վիլնյուս:

Ինչպես նշեց Վրաստանի նախագահի արտաքին հարաբերությունների քարտուղար Իվանե Մաճավարիանին, գագաթաժողովի աշխատանքի շրջանակներում Վրաստանի նախագահը հանդիպում կունենա Ֆրանսիայի նախագահ Օլանդի եւ Վրաստանի գործընկեր մյուս երկրների ներկայացուցիչների հետ:

(Խորագրի շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԼՅԱՆՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆՈՒՄ

Եվրոպական եւ եվրանտլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Բրյուսելում:

Այցի շրջանակներում, պետնախարարը ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում հանդիպում ունեցավ ալյանսի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսսենի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման, համագործակցության ամենամյա ծրագրի իրականացման, ինչպես նաեւ 2014 թվականի համար ալյանսի հետ ծրագրված համագործակցությանն առնչվող հարցեր:

Ալեքսի Պետրիաշվիլին կմասնակցի նաեւ Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի նիստին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿՀԻՄՆՎԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վրաստանի վերաինտեգրման պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին խոսեց կրոնական միավորումների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման՝ կառավարության կողմից ընդունված որոշման մասին: Ըստ պետնախարարի, հանձնաժողովում կներգրավվեն ֆինանսների, արդարադատության, կրթության եւ մյուս գերատեսչությունների ներկայացուցիչները:

Ինչպես գիտեք, պետությունը իրավական հարաբերություններ ունի միայն Վրաց Ուղղափառ եկեղեցու հետ: Այդ հարաբերությունները կարգավորվում են կոնկորդատով: Կրոնական մյուս միավորների հետ պետությունը ոչ մի առնչություն չունի, ինչը որոշակի անորոշություն է առաջացնում: Մասնավորապես՝ ֆինանսավորման, սեփականության եւ այլ հարցերով: Այդ կապակցությամբ, որոշեցինք հիմնել միջգերատեսչական հանձնաժողով»,- կառավարության նիստի ավարտից հետո, հայտարարեց վերաինտեգրման պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԻՄ ԳՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ, ԵՐԿԻՐԸ ԿՀԵՆՎԻ ԵՐԵՔ ԿԵՏԵՐԻ՝ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ, ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼՈՒ ԵՎ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒ ՎՐԱ»

Նոյեմբերի 24-ին կայացավ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության համագումարը: Համագումարին, քաղաքականության մեջ իր գործունեության երկու եւ վարչապետի պաշտոնում գործունեության մեկամյա արդյունքների յուրատեսակ հաշվետվությամբ, հանդես եկավ Բիձինա Իվանիշվիլին:

Համագումարին մասնակցելու համար տարբեր երկրամասերից Թբիլիսի էին ժամանել «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանի» անդամները: Համագումարին ներկա էին նաեւ «Վրացական երազանք» կոալիցիայի անդամ կուսակցությունների ներկայացուցիչները:

Իր ելույթում, Բիձինա Իվանիշվիլին կրկին հավաստեց քաղաքականությունից հեռանալու եւ քաղաքացիական հատված տեղափոխվելու իր մտադրությունը: «Ես կատարեցի իմ խոստումը, կարողացա վերացնել Վրաստանի հակաեվրոպական ղեկավարությունը, ավտորիտարից ժողովրդավարականի փոխել երկրի կողմնորոշումը, ապահովել ազատ ընտրությունների միջոցով իշխանափոխությունը»,- հայտարարեց Իվանիշվիլին:

«Ես իշխանություն բերեցի ժողովրդավարական ուժերին եւ հիանալի թիմ ստեղծեցի: Դա իմ առջեւ դրված խնդիրն էր, եւ ես այն կատարեցի: Այսօրվանից ձեր առջեւ կանգնած եմ ոչ թե որպես քաղաքական գործիչ, այլ որպես քաղաքացի: Ես հեռանում եմ քաղաքականությունից եւ ակտիվ քաղաքացի կլինեմ»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

«Այս մեկ տարվա ընթացքում, մենք վերացրինք այն կարծիքը, իբր «ազգայինների» հեռացմամբ երկիրը մեջքով կշրջվեր Եվրոպայի կողմը, կքանդվեր, իսկ ժողովրդավարությունը գերեզման կդրվեր: Բոլորը՝ ե՛ւ այստեղ, ե՛ւ Արեւմուտքում, հասկացան, որ դա սուտ էր: Հասկացան, որ բոլոր այս ինը տարիների ժողովրդավարությունը ցուցադրական էր, իսկ նրա ձեռքբերումների մասին խոսակցությունը ծառայում էր միայն մի նպատակի՝ շեղել Եվրոպայի ուշադրությունը, որպեսզի պահպանվեր «ազգայինների» բարօրությունն ու վարկանիշը»,- հայտարարեց Իվանիշվիլին:

Նա ներկաներին վստահեցրեց, որ Սաակաշվիլու դարաշրջանն անցյալի գիրկն է անցել, «ազգայիններին» երբեք չի տրվի իշխանություն վերադառնալու հնարավորություն: Անձամբ ինքը՝ Իվանիշվիլին, հնարավոր ամեն ինչ արել է, որ դա տեղի չունենա: Հիմնվեց կո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Հիշեցնենք, որ Բիձինա Իվանիշվիլին, իր խոստման համաձայն, վարչապետի պաշտոնում մեկամյա գործունեությունից հետո, հեռացավ քաղաքականությունից՝ կառավարության ղեկավարի պարտականությունները փոխանցելով Իրակլի Ղարիբաշվիլուն, որը նախկին կառավարությունում զբաղեցնում էր ներքին գործերի նախարարի պաշտոնը: Նոր կառավարությունում նրան փոխարինեց Ալեքսանդր Ճիկաիձեն:

Սույն համարով ձեզ ենք ներկայացնում նախագահական ընտրություններից հետո ձեւավորված կառավարության նոր կազմը, որը «Ժողովրդավարական, հզոր եւ միասնական Վրաստանի համար» կարգախոսով ձեռնամուխ եղավ գործունեությանը:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ
Վրաստանի վարչապետ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ
Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար, փոխվարչապետ

ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ
Էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարար, փոխվարչապետ

ԱԼԵՔՍԻ ՊԵՏՐԻԱՇՎԻԼԻ
Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար

ՊԱԱՏԱ ՁԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ
Վերահինտեգրման հարցերով պետնախարար

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ
Ֆինանսների նախարար

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍՈՒՐԳՈՒԼԱՁԵ
Սփյուռքի հարցերով պետնախարար

ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ
Կրթության եւ գիտության նախարար

ԼԵՎԱՆ ԴԻՓԻԱՆԻ
Սպորտի եւ երիտասարդության գործերի նախարար

ԽԱԹՈՒՆԱ ԳՈԳԱԼԱՁԵ
Բնապահպանության նախարար

ԻՐԱԿԼԻ ԱԼԱՍԱՆԻԱ
Պաշտպանության նախարար

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ
Արդարադատության նախարար



ԳՈՒՐԱՄ ՕԴԻՇԱՐԻԱ
Մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարար

ԴԱՎԻԹ ԴԱՐԱԽՎԵԼԻՁԵ
Բռնագաղթված անձանց եւ փախստականների նախարար

ՄԱՅԱ ՓԱՆՋԻԿԻՁԵ
Արտաքին գործերի նախարար

ՇԱԼՎԱ ՓԻՓԻԱ
Գյուղատնտեսության նախարար

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԻԿԱԻԶԵ
Ներքին գործերի նախարար

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵՅԵՆԿՈ
Աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար

ՍՈՋԱՐ ՍՈՒԲԱՐԻ
Քրեակատարողական, պրոբացիայի եւ իրավաբանական օգնության հարցերով նախարար



ԴԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱ
Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԻՄ ԳՆԱԼՈՒՅ ՀԵՏՈ, ԵՐԿԻՐԸ ԿՀԵՆՎԻ ԵՐԵՔ ԿԵՏԵՐԻ՝ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ, ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼՈՒ ԵՎ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒ ՎՐԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ալիցիա, որը Իվանիշվիլու խոսքերով, չպետք է թուլանա, եւ այն պարտավոր է ամեն օր ժողովրդին ապացուցել, որ արժանի է կառավարել պետությունը:

«Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստանը» չպետք է ներծուլվի պետական ինստիտուտներին, այդ հակոտնյա ավանդույթը, ցավոք, մեր երկրում դարձել է սովորական երեւույթ: Ես կցանկանայի, որ մեր կուսակցությունը կարողանար մարդկանց միավորել ինչպես գաղափարախոսական, այնպես էլ՝ ընդհանուր արժեքների ընկալման առումով: Այն պետք է դառնա կուսակցություն, որը իրականում ծառայում է ժողովրդին եւ օգտվում մարդկանց վստահությունից»,- այսպիսին էր Իվանիշվիլու պատկերացումն իր քաղաքական կազմակերպության ապագայի հարցում: Նա նշեց, որ, իր հեռանալուց հետո, երկիրը կհենվի երեք կետերի՝ երիտասարդ, սակայն շնորհալի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, արդի ժամանակաշրջանի ճանաչված քաղաքագետ, խորհրդարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող Դավիթ Ուսուփաշվիլու եւ Գիորգի Մարգվելաշվիլու վրա, ով, Իվանիշվիլու համոզմամբ, կլինի ողջ ժողովրդի եւ ոչ թե իշխանության կողքին գտնվող մարդկանց նեղ խմբի նախագահը: Գլխավորն այն է, որ, ըստ նախկին վարչապետի, իր կողմից ընտրյալների մոտ գլխապտույտ չառաջանա, նրանք պետք է հիշեն, որ իրենց դիրքը կառավարող կոալիցիայի մյուս անդամների նկատմամբ գերակայություն չի ներկայացնում:

Նա կրկին ընդգծեց, որ Վրաստանն այսօր, ավելի քան երբեւէ, մոտ է Եվրոպային, եւ այդ ուղին անփոփոխ է: Միաժամանակ նա ընդգծեց, որ եվրոպական միտումը պետք է ընթանա Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ:

Բիձինա Իվանիշվիլին շնորհակալություն հայտնեց Վրաստանի ժողովրդին՝ դժվարին պահին իրեն եւ իր զինակիցներին ցուցաբերած աջակցության համար, ինչն էլ ապահովեց երկրում ժողովրդավարական ուժերի հաղթանակը:

Ապա ելույթ ունեցավ Իրակլի Ղարիբաշվիլին, որը ներկաներին եւ, առաջին հերթին, Բիձինա Իվանիշվիլուն վստահեցրեց, որ կուսակցության նոր ղեկավարությունը անշեղ կհետեւի «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահի պաշտոնում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու թեմածությունը: Կուսակցության գլխավոր քարտուղար ընտրվեց Վրաստանի էներգետիկայի նախարար Կախա Կալաձեն:

Համագումարն ընտրեց նաեւ կուսակցության ղեկավար մարմնի՝ քաղխորհրդի 12 անդամներին: Քաղխորհրդի անդամներ են ընտրվել Կախա Կալաձեն, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, խորհրդարանի պատգամավորներ Գիորգի Վոլսկին, Մանանա Կոբախիձեն, Թամազ Ավդալիանին, Դավիթ Սագանելիձեն, էկա Բեսելիան, Իրակլի Տրիպոլսկին, Թեմուր Ճկուասելին, Իրակլի Սեսիաշվիլին, Արմազ Ախվլեդիանին: